

Բախտին ու փառքին բազմած սիգապանծ
Միծու թեան զանին անարդարացի :

Ո՛վ դուք գարեբի պատմամասնուներ ,
Ես ձեզ եմ այստեղ իմ կոչը ուղղում :

Այս վե՛ն մեծութեան վայրումն առաւել
Բարձր է իրնդարեր ձեր ձայնը հրնչում :

Նա հալածու՞մ է նիրհը ծուլութեան ,
Գործի հուր ու խանդ իմ մէջ ըտրորջում :

Եւ ձեր խոկումներն ստեղծագործական
Մըլում , հասնում են իմ սրբին խորքում :

Բաց անկ միտք է այստեղ իմ հոգին
Արտում թէ դաշտում այս պաշարայատ ,

Մըտալով պատում .

Ո՛հ , վիշտ է միայն այքըս տարադին
Եւ սգիտութեան կործանիչ արատ

Այստեղ նրիխառում :

Արցունքի առջ իսպառ կուրացած ,
Սառն ու խուլ վրեկայ դառն հառաչանքի ,

Բիրտ աղայութիւնն կոյր բախտից ընթրուած ,
Առանց ըզգացման , տանց օրէնքի ,

Իշխում է այստեղ ձեռքին գաւազան ,
Իրնի զարձանով իրան սեփական

Ինզէ՛ք երկրագործի ե՛ւ ինչք ե՛ւ վաստակ ,
Տուն եւ տեղ արդիւնք ու՞մ եւ ժամանակ :

Ե՛ւ գործն օտարի ե՛ւ դու թե՛ն օտար ,
Մէջը կորացած , լախտի հրնազանգ ,

Հերկում է այստեղ սաըրկութիւնն անձար
Անողջք տիրոջ հողերն արգաւանդ :

Այստեղ ամենքն էլ ծանրը լըծի տակ ,
Մինչ մանու գուռը տանում են կրքբում

Երկիւղից պզանուած յոյս , հալում , փախազ .
Այստեղ նորատի կոյսերն են ծաղկում

Կեղծ չարագործի վաւաչ ու մոլար
Հաճոքքի համար :

Մտաղհաս որդիք՝ օգնական գործում ,
Սրբելի նեցուկ ձերուկ հայրերի ,

Իըրճիթն հայրական թողած ակամայ ,
Այստեղ տանջում են , որպէս ճորտ գերի ,

Աղայի տան մէջ դարձած խեղճ ծառայ :
Ա՛խ , եթէ իմ ձայնն ընդունակ ինիւր

Ցընցելու մտքեր , յուշելու սրբանբ .
Է՛լ ինչո՞ւ ես դու կըրքբում շարունակ

Վաղբում , բորբքում , անարդիւն կըրակ .
Ինչո՞ւ չէ սըրբած եւ ինձ աւաւոր

Պեճահասութեան տաղանդ ու շրնոր՝ ,
Ընկերներե՛ր , արիտք կը տեսնե՞մ այքով

Եւ մի օր իմ սղգն ազատ , անհայած ,
Եւ արքայական քաղաքով բազկով
Անպառ ստրկութիւնն իսպառ տապալում .
Եւ հայրենիքես , վերջապէս , մի օր

կը շողա՞յ արդեօք պայծառ , լուսաւոր

Ա՛յնքան փառազած , ա՛յնքան տենչայոյց

Սուրբ Ազատութեան սիրուն արշալոյս :

Քարգմ . ԱՆԷՄԱՆԵՂԻ ՄԱՏՈՒՐԱՆ



ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ՖՐԱՆՍԱՍԹԻ ՄԷՋ



Ա . Զօպանեան հրաւիրուեցաւ Sociéte de
geographie de l'Estին կողմէ՛ն Նաւուի , Էքինալ
Պատը-Տիւք քաղաքներուն մէջ բանախա
սութիւն մը կատարել Հակիական խնդրոյն
վրայ : Անանխտ»ի տնօրէնը , Իրեն նիւթ ու
նենալով «Հայերն ու Ֆրանսան», բանախոսեց
ղեկտնմեր Յին Էքինալ, Տին Նանսի եւ 10ին
Պատը-Տիւք : Բանախոսութիւնը կը ձգտէր
բացատրելու այն դերը զոր Հայ ցեղը կատա
րած է իր ուրոյն պատմութեան ինչպէս եւ
տեղեղեղական պատմութեան մէջ , եւ այն մը
տարակապն , քաղաքակապն ու աստեղարակապն
կապերը որոնք գոյութիւն ունին Ֆրանսայի
եւ Հայութեան միջեւ :

Հակառակ ծայրայեղ անկեղծութեան շեշտի
մը որով բանախօսը հայ ժողովրդին դառնու
թիւնը յայտնեց ջարդերու միջոցին Ֆրանսայի
անտարբերութեանը եւ զգուանքը Պ . Հանթոնի
«Թուրք» քաղաքականութեանը մասին , ուն
կընդիր հաստարակութիւնը իր համակրական ծա
փերով եւ տեղական մամուլը իր խրախուսիչ
գնահատումովը ապացուցին թէ համամիտ են
հայ բանախօսին :

Միեւնոյն բանախօսութիւնը տեղի պիտի
ունենայ յունուար 13ին Քուրքուան , 14ին
Ռուպէ , 15ին Լիլ , եւ 19ին Նանսի :

ՏԻՐԱՆ ԵՐԿԱՅԻ ԳՈՐԾԵՐԸ

Ուրախութեամբ կ'իմանանք որ Պ . Մոսիս
Պառնս , որ անձնապէս ճանչցած եւ գնահատած
է «Տիրքան Երկաթը» , որոշել է հրատարա
կիչ մը գտնել եւ հատորի մը մէջ ամփոփել
«Երկաթ»ի բոլոր ֆրանսերէն սպուռն եւ ան
տիպ գրութիւնները :

«Անահիտ»ի յառաջիկայ թուով պիտի հրա
տարակենք թարգմանութիւնը «Հայաստան եւ
Յունաստան» տիպոյտով բանախօսութեան ,
զոր «Տիրքան Երկաթ» Աթէնքի մէջ արտա
սանած է եւ որուն բնագիրը մինչեւ հիմա
անտիպ մնացած է :